[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
4	Հուլիս	2019 թ.		Բ	4121669191
[4] Առաքման ամսաթիվ					
4	Հուլիս	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխակատազմի գործառնական վարչություն N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր — Համար
	Լիազորագիր — Ամսաթիվ
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բաժնետ. հարկ	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 23155118 բ/գ.	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

04/07/2019 14:34:49

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

« 30 » ապրիլի 2019թ. քաղ.Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Ռ.Գ.Մխիթարյանս, քննարկելով թիվ 23155118 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

2018թ-ի դեկտեմբերի 10-ին ոստիկանության Անիի բաժնի ՔՀԲ օ/լ, ոստիկանության կապիտան Հ.Ավետիսյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ նույն օրը գողություն կատարելու կասկածանքով ոստիկանության Անիի բաժին է բերման ենթարկվել Մարալիկ քաղաքի բնակիչ՝ Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը /ծնվ.20.08.1991թ./, ով տվել է խոստովանական բացատրություն այն մասին, որ ս/թ-ի դեկտեմբերի սկզբներին ժամը 01:00-ի սահմաններում Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի 34-րդ շենքի 1-ին հարկում գտնվող «Երևան թիվ 1 տուն ինտերնատ» ՊՈԱԿ-ին պատկանող նախկին պահակակետի մուտքի դռան փականը տեխնիկական միջոցների գործադրմամբ բացելու միջոցով մուտք է գործել այնտեղ և գողացել թվով մեկ հատ «Մերկուրի» տեսակի գազի կաթսա, որը 50.000 ՀՀ դրամի դիմաց վաճառել է Մարալիկ քաղաքի բնակիչ ոմն Հրաչին:

Նույն օրը նշվածի վերաբերյալ ոստիկանություն հաղորդում է տվել «Երևան թիվ 1 տունինտերնատ» ՊՈԱԿ-ի պարետ Տոնական Հովհաննեսի Գրիգորյանն այն մասին, որ Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի 34-րդ շենքի նախկին պահակակետից գողացել են մեկ հատ «Մերկուրի» տեսակի գազի կաթսա և ոստիկանության աշխատակիցներից տեղեկացել է, որ նշված գողությունը կատարել է Մարալիկ քաղաքի բնակիչ Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը՝ պատճառելով մոտ 170.000 ՀՀ դրամի վնաս:

Դեպքի առթիվ 2018թ. դեկտեմբերի 10-ին ոստիկանության Անիի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 23155118 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Արթիկի և Անիի քննչական բաժին:

Քրեական գործով «Երևան թիվ 1 տունինտերնատ» ՊՈԱԿ-ի պարետ Տոնական Հովհաննեսի Գրիգորյանը ճանաչվել է տուժողի ներկայացուցիչ և հարցաքննվել տուժողի դատավարական կարգավիճակում:

30.01.2019 թվականին Տիգրան Ռազմիկի Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը և նույն օրը հարցաքննվել է կասկածյալի դատավարական կարգավիճակում:

Նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության թիվ 373-Ապ-18 եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված ջեռուցման կենտրոնացված գազի կաթսայի հավանական միջին շուկայական արժեքը 2018 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ, առկա արտաքին ապրանքային տեսքի հաշվառմամբ, ընդունելով աշխատունակ և պիտանի ապրանքային վիճակում, գնահատվում է 100.000/մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2019 թվականի փետրվարի 4-ին, Տիգրան Ռազմիկի Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018 թվականի դեկտեմբերի սկզբներին, քննությամբ չպարզված օրը, ժամը 01:00-ի սահմաններում, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ՝ օգտվելով Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի 34-րդ շենքի 1-ին հարկում տեղակայված, «Երևան թիվ 1 տուն ինտերնատ» ՊՈԱԿ նպատակներով պարտավոր պահակակետում մաս տեղեր

դրամ արժողության <<Մերկուրի>> տեսակի գազի կաթսա, որը պահակակետից միայնակ տեղափոխել է իր բնակության վայր, ապա 50.000 ՀՀ դրամով վաճառել Մարալիկ քաղաքի բնակիչ Հրաչ Մուշեղի Դավթյանին:

Մեղադրյալի դատավարական կարգավիճակում Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը տվել է խոստովանական ցուցմունք, միաժամանակ հայտնել, որ առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է կատարածի համար:

Քրեական գործով պարզվել է, որ Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը ,,էպիլեպսիա հաճախակի գեներալիզացված տոնիկ կլոնիկ ցնցումներով, ատենտ-նևրոտիկ սինդրոմ,, ախտորոշմամբ անցնում է << Մարալիկ առողջության կենտրոն>> ՓԲ ընկերության նյարդաբանական հաշվառումներով:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ, 244-րդ, 248-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. 23155118 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրան նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ մեղադրյալ Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/ եթե Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ/ մեղադրյալ Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/ եթե մեղադրյալ Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ մեղադրյալ Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ մեղադրյալ Տիգրան Ռազմիկի Պետրոսյանը հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը:

3. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինեն քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Թիվ 23155118 քրեական գործի նյութերը փորձագետին կտրամադրվի լրացուցիչ:

Պետի տեղակալ՝ **Ռ.Գ.Մխիթարյան**